

երեք արքեպիսկոպոսներու մազադաթեայ դէմքերուն տրտում եւանիշ խորհուրդը այդ գետնամած, ծնրադիր փառքին վերեւ։ Ու կը տեսնեմ ձեռքերը եպիսկոպոսներուն որոնք կը բացոյնին պատրիարքին զլուխին ու զայն կը տեսնուագրեն

— Ի պատրիարքութիւն Առաքելային Արքային Յրոյն Յրուսաղէմի։

Օ՛ր, աղօթքները մեր հայրերուն, երբեմն այնքան իրաւ, խորունկ, ձեռնադրութեան սա պահերը բարձրագոյն բանաստեղծութեան վերածող։

Բոպէ մը։

Յետոյ կը բացուին ձեռքերը ետ։ Կը շողայ, ազօտ ու տրտում մաս մը ալիքառն այդ գանկէն։ Ու բառերը, որոնք խորհրդաւոր քարայրէ մը փրթէին կարծես։

Անիկա ըրած է իր երդումը անասան պահելու փառքերը իր Աթոռին, իր եկեղեցիին ու իրաւունքները իր ժողովուրդին։

* * *

Ձայն տեսնել նորէն, երբ կը խօսի այս անգամ ժողովուրդին։

Դուք գիտէք անոր խօսքը ամբողջութեամբ։

Նոյն յուզումը, նոյն ծանրութիւնը, նոյն ապրումները։

Ու պէտք է կարճ ըլլալ։

Երբ անոր բառերը, տրտում ու քաղցրը, կը թաւալին, դաշնուելով պահին, անձին մանաւանդ ժողովուրդին սպասումին հետ

եւ կը նայիմ դասը լեցնող զպիւններէն ամենէն պզտիկին։ Տղեկը մեր գրադանութեան մէջ անմոռանալի անուան մը կը կրէ, Զօհրապ։ Ան ի՛նչ անպատմելի երեսունութիւն է սակայն պզտիկին նայուածքը։ Անիկա ինծի կը թուի ոսկի կամարը ըլլալ ուրուն վրայէն կը քալէ մեր ճակտին գիրը, երբեմն գէպի բարձունք, երբեմն գէպի անդունդ։

Ու կը բերեմ կամարին երկու ոտքերը իրարու։ Ան որ օրուան իրեն գահակալը կ'ողջունուի, գպիր մըն էր Զօհրապիկին նման։

Երանի ճակտի գիրովը քաղցնեցուն։

Յ. ՕՇԱԿԱՆ

Ժ Ա Մ Ա Ն Ո Ւ Մ

ՊԱՂԱՅՏԻՆԻ ԵՒ ԱՆԴՐՈՅՈՐԴԱՆԱՆԻ

ԲԱՐՁՐ ԳՈՄԵՍՅՈՐԻՆ

Նոյեմբեր 21 1945-ին Lieut.-General Sir Alan Gordon Cunningham, K. C. B., D. S. O., M. C., Պաղեստինի և Անգլոյորդանի նորընտիր Բարձր Գոմիսիոնը Լիտտա կը ժամանէ առաւօտեան ժամը 9.45-ին, և Երուսաղէմի օճախներուն՝ կ'ընդունուի պետական և ղինուորական բարձրաստիճան պաշտօնեաներու կողմէ, որոնք չըստեմբով կ'առաջնորդեն զինք իր ապրանքը։

Երեկոյեան՝ ապարանքի որակին մէջ, տեղի ունեցաւ «Երդման» արարողութիւնը. ի ներկայութեան բարձրաստիճան պաշտօնատարներու, կրօնական պետերու, և ներկայացուցիչներու։

Ժամը հիշք 4-ին Նորին Վեմութիւնը կը ժամէ սրահ ու կանգ կ'առնէ պատրաստուած բեմին կեդրոնը, երկու կողմերը ունենալով Պաղեստինի Գլխաւոր Գաւառարը և Պետական Ասագ Բարուսուղարը։

Երուսաղէմի Անկլիկէան Եպիսկոպոսը աղօթքներ կ'արտասանէ թագաւորին և անոր Բարձր Գոմիսիոնին համար, ինչպէս նաև խաղաղութեան համար Պաղեստինի բնակչութեան։

Ապա Պետական Գործադիր Ժողովի Բարոսուղարը կը կարդայ Ն. Վեմութեան Բարձր Գոմիսիոնի նշանակման Արքայական Լըովաբարակի բնագիրը, որուն կը լսողդէ նոյնին Արաբերէն և Եբրայեցիքէն խորհմանութիւններուն ընթերցումը։

Արքայական Լըովաբարակի ընթերցումէն ետք, իբրև Պաղեստինի Բարձր Գոմիսիոնի և Գլխաւոր Լըովաբարակի, Նորին Վեմութիւնը կ'արտասանէ հանգիստար իր ուխտը, զոր ապա կը ստորագրէ ի հաստատութիւն։ Ի վկայութիւն կը ստորագրէ նաև Գլխաւոր Գաւառարը։ Նորին Վեմութիւնը՝ Անգլոյորդանի իբրև Բարձր-Գոմիսիոն, իր ուխտը պիտի կատարէ աւելի ետքը Ամմանի մէջ։

Ախտի արարողութեան ետք, Գլխաւոր Գաւառարը կ'արտասանէ ճարտի գալուստի իր ուղերձը, որուն մէջ ցաւով կը յայտնէ թէ Նորին Վեմութիւնը պիտի գտնէ Պաղեստինի մէջ քաղաքային լարուածութիւն մը որ ապահովութեան անբնական միջոցառումներ կը պահանջէ։

Նորին Վեմութիւնը սոյն ուղերձին կը պատասխանէ յստակ և կարուկ ոտով. յայտնելով իր պատրաստակամութիւնը համադրածակցելու բուրախութիւն և անվերապահ աքաղաղ Պաղեստինի բնակչութեան բարեբեքին և ապահովութեան համար։

Մէկուկէս ժամ տեւող երդման ուսն արարողութեան ետք հանդիսականները ներկայացուցան Նորին Վեմութեան։

Ամենապատիւ Արքայազն Գաւրիարը Հայրը անձամբ ներկայացաւ Նորին Վեմութեան, և բարձր գաւառում մասկեց ի զինմաք Սբոց Յակոբեանց Մարանութեան։

Անցն յանուն Սբոց Յակոբեանց Միաբանութեան և անոր Գահակալին, կը մագլթէ Նորին Վեմութեան առողջութիւն, համբարութիւն և կարողութիւն. վերահաստատելու խաղաղութիւնը Պաղեստինի մէջ և կառավարելու երկիրը խաղաղութեան մէջ երկար տարիներ։